

## ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՐՊԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### Ե. Ժ. ՄՐԱՑԱԿԱՆՅԱՆ

Ե դարի պատմագրության մեջ հոգևոր դասի կերպավորման առանձնահատկությունները քննելիս անհրաժեշտ է խորանալ ժամանակաշրջանի հոգևոր և քաղաքական մթնոլորտի մեջ և առանձնացնել այդ միջավայրի գործիչներին որպես պատմական դեմքեր, իմանալ՝ ինչպիսի կյանքով են ապրել, ինչ գաղափարներով են առաջնորդվել, ինչ նպատակներ են հետապնդել և ինչ դեր են խաղացել նրանք հայ ժողովրդի կյանքում:

Անհրաժեշտ է պարզել նաև, թե ինչ սկզբունքներով են կերտել հոգևորականների կերպարները պատմագիրներից յուրաքանչյուրը, ինչ ընդհանրություններ ունեն դրանք, և որքանով է հաջողվել հեղինակին ներկայացնել այդ կերպարների անհատականությունը:

Պատմիչների կերպարակերտման սկզբունքները հասկանալու համար մեզ անհրաժեշտ է նաև հոգևորականների կերպարները պայմանականորեն դասակարգել ըստ հեղինակների տված գնահատականների («սրբեր», «միջակ» հոգևորականներ, «չեղեցներ»):

«Միջակ» հոգևորականների մասին պատմիչների տված տեղեկությունները ժյատ են ու հակիրճ: Սրանց մասին խոսելիս ավելի հաճախ օգտագործվում է «ոճն» բառը, որը, մեր կարծիքով, սոցիալականացված ոճ է: Իսկ նմանօրինակ ոճն արդյունք է հերոսների կատարած կամ, ավելի ճիշտ կլինի ասել, չկատարած գործերի: Հայրենասեր հեղինակը նախ և առաջ գնահատում ու գովերգում է այն անձանց, որոնց կենսակերպը, ծավալած գործունեությունը ուղղված են ժողովրդի շահերին ու ծառայում են նրա բարօրությանը: Ուստի պարզ է, որ այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Փառենը, Սահակը, Ջավենը, Հուսիկը, Ասպուրակեսը իրենց ինքնամոտի կյանքով չէին կարող կերտվել որպես ամբողջական, լիարյուն կերպարներ: Սրանց հավատը ինքնանպատակ է, չեն կարող ինքնագոհաբերման գնով պայքարել քրիստոնեության տարածման ու ամրապնդման համար, կրոնն ամարգողների նկատմամբ չունեն ընդդիմանալու խիզախություն, էությանը համակերպվող են, անհամարձակ, երկչուտ ու լռակյաց: Հոգևորականների այս նկարագիրը տալիս ենք՝ հենվելով Բուզանդի բնութագրումների վրա. «Բայց միայն զիտ անձն սուրբ պահեր, և ի հարկե ընգեղեր անօրեն թագատրին, և ըստ նորին կամացն երթեալ հնագանդեալ»<sup>1</sup>:

Խորենացին, ի տարբերություն Բուզանդի, ընդամենը մեկ կամ երկու նախադասությամբ տեղեկացնում է այս կամ այն հոգևորականի պաշտոնավարման ժամանակահատվածը և ուրիշ ոչինչ, միայն Աղբիանոսի ցեղից ոճն Սահակի մասին ավելացնում է, որ նա գովությունից հեռու չէր: Խորենացու նմանօրինակ լուրջությունը նույնպես կարելի է կերպավորման սկզբունք համարել: Այդ հակիրճությունը խոսում է այն մասին, որ վերը նշված հոգևորականները չունեն հիշատակության արժանի գործեր ու հայոց բազմամարդ կյանքում որոշակի դեր չեն խաղացել:

V դարում «սրբերի», «միջակ» հոգևորականների կողքին ապրել ու գործել են նաև որոշ «չքահանաներ», որոնք նույնպես արժանացել են պատմագիրների ուշադրությանը և ոչ պատահականորեն: Սրանք՝ Սուրմակը, Բրքիշոն, Հոհանը, Շամուելը, Ջավենը, Ջանգակը, Պետրոսը և այլք, բոլորն էլ բացասական կերպարներ են: Սակայն նկատենք, որ այս հերոսներից յուրաքանչյուրը որպես դատապարտելու արժանի անձ, ցուցադրված է հիմնականում մեկ գծով, որն էլ որակ է ստեղծում: Այսպես՝ Սուրմակը կաթողիկոսական աթոռին տիրելու

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 70:

համար չարախոսում ու զրպարտում է հայոց Արտաշիր թագավորին, Բրքիշուն ու Շամուելն աչքի են ընկնում հատկապես իրենց անժուժկալ ու շռայլ կենսակերպով, Չանգակ, Պետրոս երեցներին, Սահակ սարկավագին կարելի է որակել մեկ բառով՝ դավաճան և այլն:

Բացասական կերպարների կողքին իր ուրույն տեղն ունի Հոհան եպիսկոպոսը: Նա, ի տարբերություն մյուսների, առավել ամբողջական ու կենդանի կերպար է: Հոհանը նախ ուրվագծվում է Բուզանդի տված գնահատականում. «Եւ էր սա այր կեղծաւոր, և երևեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող և խորգահանդերձս, մինչ զի մոյզս անգամ ոչ ազանէր...»<sup>2</sup>:

Սրան անմիջապես հետևում է Հոհանի կյանքի որոշ դրվագների ցուցադրումը: Արարքների, մարդկանց հետ ունեցած փոխհարաբերությունների ընթացքում առավել է բացահայտվում Հոհանի հոգեբանությունը: Բուզանդի պատմության «Ժ» գլխում նա ուղտի մնան չորեքթաթ անելով ման է գալիս թագավորների առջև՝ անընդհատ կրկնելով, «թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարթայի զմեղս բառնամ. դիք ի վերայ իմ զմեղս արթայի, թող բառնամ»<sup>3</sup>:

Ինքնադրսևորման միջոց է նաև Հոհան - անծանոթ աշխարհիկ մարդ, Հոհան-այգեպան երկխոսությունները, որի ընթացքում Հոհանի կերպարը դառնում է ամբողջական ու համոզիչ:

Բացասական կերպարների առկայությունը պատմագրության մեջ պատահական չէ: Պատմիչներն իրենց գործերում արտացոլում են ժամանակի ռեալ պատկերը, իսկ իրական կյանքում ապրել ու գործել են ոչ միայն սուրբ ու հրեշտակային վարք ունեցող հոգևոր հայրեր, այլ նաև իրենց կոչմանն անհավատարիմ, աշխարհիկ հաճույքներից չիրաժարվող քահանաներ: Այլ խոսքով՝ առանց վերջիններիս անհամոզիչ կլինեին նաև «սուրբ» հոգևորականների կերպարները, որոնք մեծ տեղ են գրավում V դարի պատմագրության մեջ:

Քրիստոնեության տարածման ու հաստատման գործում ամենամեծ դերը պատկանում է Գրիգոր Լուսավորչին: Նա Ազաթանգեղոսի «Պատմության» մեջ ներկայացվում է որպես մի կատարյալ նահատակ՝ պատրաստ զոհաբերելու իր կյանքը հանուն Քրիստոսի:

Գրիգորիսը արքայասպան Անակի որդին է, մեծացել և դաստիարակվել է Կեսարիա քաղաքում, որտեղ և ընդունել է քրիստոնեությունը. «Իբրև տեղեկացաւ ի դայեկացն հայրենի գործոցն որ եղեալն էին՝ ել և զնաց առ Տրդատիոս ըստ հեշտ պաշտաման: Եւ թաքուցանէր զանձն. և զայն ինչ ի վեր ոչ հաներ, թէ ո՛ր, կամ ուստի՛, կամ ո՛րպէս, կամ զիա՛րդ. զանձն ի ծառայութիւն տուեալ ի հնազանդութեան պաշտէր առաջի նորա»<sup>4</sup>: Այսքանով ավարտվում է մարդ-Գրիգորիսի բնութագիրը և սկսվում մեծ Հավատացյալի գործունեությունը:

Ազաթանգեղոսը նրան ներկայացնում է որպես ճշմարիտ հավատի համար մարտնչող և չարչարանքներից ու տանջանքներից չընկրկող գաղափարակրի:

Լուսավորչի կերպարը սկզբում զարգանում է միագիծ՝ վկայակաբանական հերոսի մեծան, այն տարբերությամբ, որ վկայակաբանական հերոսը վեհ գաղափարի համար նահատակվում է՝ տանելով բարոյական հաղթանակ:

Գրիգորիսը նախ և առաջ բացահայտվում է Տրդատի հետ ունեցած երկխոսությունների-ընթացքում: Նա ամեն կերպ ջանում է ապացուցել քրիստոնեության առավելությունն ու մարդասիրական էությունը հեթանոսության ու մյուս հավատքների համեմատությամբ: Առանց վախենալու Գրիգորը Տրդատին ու նրա մեծան անհավատներին մնանցնում է ձիերի ու ջորիների, որովհետև «ոչ գոյ ի նոսա իմաստութիւն, և քան զեզն և զէշ ևս պակասամտագոյն գտայք, զի ոչ ծանեայք զձեր հաստիչն...»<sup>5</sup>:

Որքան հավատարիմ ու նվիրված «ծառա» է Լուսավորչին իր մարմնավոր տիրոջը՝ Տրդատին, նույնքան անողոք է նրա նկատմամբ, քանի որ վերջինս անարգում է քրիստոնեական հավատն ու Քրիստոսին:

Աշխարհիկ տերերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի այս երկվությունը հատուկ է հոգևոր հայրերի դիրքորոշմանը, ինչը երևում է համարյա բոլոր պատմիչների գործերից:

Կտտանքներն ու չարչարանքները հաջորդում են միմյանց, սակայն Գրիգորն իր հա-

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 406:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 410:

<sup>4</sup> Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 34:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 46:

վատի մեջ անհորդորդ է: Եվ որքան անմարդկային ու անտանելի են դառնում հալածանքներն ու տանջանքները, այնքան ավելի է մեծանում նրա հավատն առ Աստված: Ազաթանգեղոսը մանրակրկիտ նկարագրում է Լուսավորչի կրած տառապանքները՝ ընդգծելու գերմարդկային ուժերով դիմացող ու պայքարող գաղափարական հերոսի բարոյական գորուքյունը:

Նա տենչում է նահատակվել հանուն Քրիստոսի, սակայն Տրդատի հրամանով նետվում է Խոր Վիրապ: Տասներեք տարի շարունակ աղոթում է ու գոհունակությամբ խոսքեր ուղղում Արարչին: Եվ Աստծո ողորմությամբ գոյատևած Գրիգորը դուրս է գալիս Վիրապից՝ որպես անհավատների միակ փրկիչ և ապավեն:

Լուսավորչի կերպարը շարունակում է զարգանալ պատմության մեջ ծավալվող գործողությունների շրջալույսում: Բարեպաշտ, համեստ, առաքինի հավատացյալը, հետագայում ունենալով Տրդատի աջակցությունը, մեծ գաղափարի իրականացման ճանապարհին դառնում է «անողոր» ու դաժան: Նա ձգտում է նորաթուխ քրիստոնյաներին հեռացնել հեթանոսական ավանդներից, առանց երկմտելու և ափսոսելու քանդում, ավերում, այրում է հեթանոսական տաճարները, շինությունները, սրի քաշում անհավատներին: Նույն ոգևորությամբ Գրիգորը կառուցում է եկեղեցիներ, ժողովրդին ծանոթացնում է Սուրբ Գրքին, քարոզում սիրելի ու վստահելի Աստծուն, ձեռնամուխ է լինում քրմերի որդիներից բարեպաշտ հավատացյալներ դաստիարակելու գործին:

Փաստորեն Լուսավորիչը ոչ միայն քրիստոնեական գաղափարների կրողն ու ջատագովն է, այլև նրանց համար մարտնչողն ու պայքարողը: Ուրեմն՝ ոչ միայն գաղափարախոս, այլև գինվոր:

Գաղափարակիր հերոսներին հատուկ այս համընդհանուր պատկերացումների ֆոնի վրա պատմիչը Գրիգորիսին ներկայացնում է նաև իր անհատական գծերով: Նախ՝ նա անդրդվելի է իր հավատի մեջ, ծայրահեղ սկզբունքային է, անվախ է ու քաջ, քրիստոնեության տարածման համար ոչ մի բանի առջև կանգ չի առնում, ինքնակամ իր մեջ սպանում է ծնողական զգացմունքները, հակադիր վերաբերմունք է դրսևորում քրիստոնյաների ու հեթանոսների նկատմամբ, այսինքն՝ նրա մեջ ապրում է բարի ու դաժան մարդը: Հետաքրքիր է, որ Ազաթանգեղոսն իր սիրելի հերոսի արտաքին նկարագիրն անտեսում է, գուցե և մտածված (եականը մարմնի մեջ պարփակված հոգու բացահայտումն է):

Խորենացու կերտած Գրիգորիսը, ի տարբերություն Ազաթանգեղոսի, ավելի աղոտ գծերով է ներկայացվում: Այստեղ մենք առնչվում ենք Լուսավորչի անձնական կյանքի մի դրվագին միայն, ըստ որի Գրիգորիսը չափահաս դառնալուն պես ամուսնանում է Դավիթ անունով մի հավատացյալ մարդու աղջկա՝ Մարիամի հետ: Երեք տարի հետո փոխադարձ համաձայնությամբ Գրիգորը հեռանում է կնոջից՝ նրա մոտ թողնելով Արիստակես և Վրթանես որդիներին:

Խորենացին գոհունակությամբ նշում է, որ այնուհետև Գրիգորիսը չի փնտրում իր որդիներին, իսկ դա նշանակում է, որ նա իր հայրական զգացմունքներն ստորադասում է վեհ գաղափարին և պատրաստակամություն հայտնում ծառայելու միայն հանուրին:

Այսպիսով, չնայած անողոր հալածանքներին, Գրիգոր Լուսավորիչը դասվում է սրբերի շարքը: Ժամանակի պահանջով ու հրամայականով, պատմական ու քաղաքական բարդ ու հակասական իրադարձությունների հողվություն նրա գործն իրավամբ դարձավ շրջադարձային հայ ժողովրդի համար և վաստակեց Սուրբ կոչվելու իրավունքը:

Լուսավորչի կրտսեր որդուն՝ Արիստակեսին, Խորենացին անվանում է «սուսեր հոգևոր»: Նա անընդմեջ «թրատում է» զարտուղիներով ընթացող մարդկանց ճանապարհը՝ փորձելով նրանց ճիշտ ուղու բերել:

Արիստակեսն առաջինն է փոխարինում հորը, մասնակցում Նիկիայի ժողովին, կարգավորում եկեղեցական գործերը:

Վրթանեսի անվան հետ է կապվում դարաշրջանի մտածողությանը հատուկ մի հրաշապատում: Տարոնում ապրող մի խումբ մարդիկ, նախարարների թելադրանքով, կաննում են սպանել սուրբ Հովհաննեսի վկայարանում գտնվող Վրթանեսին, սակայն կապվում են դավադիրների ձեռքերը, և միայն Վրթանեսի աղոթքից ու ներելուց հետո են նրանք ազատվում այդ աներևույթ կապանքներից:

Այս դիպվածի մասին գրում են և՛ Քուզանդը, և՛ Խորենացին՝ մեկ անգամ ևս հաստատելով այն միտքը, որ կատարյալ հավատացյալը միշտ կրում է Աստծո հովանավորությունը և ի վիճակի է հրաշքներ գործելու:

Վրթանեսը նաև քաղաքական գործիչ է և մեծ հայրենասեր. «...սզացեալ ի վերայ աշխարհիս Հայոց, որք յանհիշխանութեան մնացեալք՝ յարեան ազգ յազգի վերայ նախարարութիւնք կոտորել զմիմեանս...»<sup>6</sup>:

Տրդատ քազավորի վախճանվելուց հետո Վրթանեսը հայրենասեր մախարարների օգնությամբ հայոց գահին է նստեցնում օրինական ժառանգորդներին (սկզբում՝ Խոսրովին, ապա՝ Տիրանին):

Նա օրենք է սահմանում՝ յուրաքանչյուր տարի նշել ու պատարագ մատուցել երկրի փրկության համար ընկածների հիշատակին, իսկ նրանց ընտանիքներին՝ խնամել ու օգնել: Եվ պատահական չէ, որ վերջինիս մահը մեծ ցավով է ընդունում ժողովուրդը:

Փայտակարան քաղաքում եպիսկոպոս նշանակված Վրթանեսի կրտսեր որդին՝ Գրիգորիսը, աչքի է ընկնում իր «խստագոյն ու դժուարագոյն անհամարք ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեանն, պահօք և սրբութեամբ, տքնական հսկմամբ մարդոյ»<sup>7</sup>: Գրիգորիսի կերպարը հիմնականում հիշեցնում է իր նախորդներին, զարգանում է միազիծ՝ որպես կատարելատիպ: Խորենացին գրում է. «Որոյ երթեալ լինէր օրինակ բարի, հայրենականօքն վարելով առաքինութեամբք. այլ կուտութեամբ գեր ի վերոյ քան զհարսն, և պատժականաւ զոյգ ընդ թագաւորին»<sup>8</sup>:

Նշված հատվածը հաստատում է այն միտքը, որ Գրիգորիսը իր էությամբ, վարք ու բարքով, գործելակերպով բավականին մտան է պապին՝ Գրիգոր Լուսավորչին: Իսկ սա սուկ ժառանգականության խնդիր չէ, այլ հոգևոր մարդու կերպավորման ավանդույթ դարձած մոտեցում:

Վրթանեսի մյուս որդու՝ Հուսիկի մասին պատմելիս ակնհայտ է Քուզանդի մեծագույն հարգանքը: Ի տարբերություն նախորդների, հեղինակը նկարագրում է նրա արտաքին տեսքը. «Զի աւուրբք մանուկ, տիօք առոյգ, և բարձր հասակաւ, գեղով երեսաց սքանչելի և չքնաղ, զի այլ ոչ գտանէր ուրեք մեան մեմ'ի վերայ երկրի»<sup>9</sup>:

Հուսիկի արտաքին նկարագրությունը Փ. Քուզանդը պատահականորեն չի արել. իր սիրելի հերոսներին հեղինակը ներկայացնում է բավականին գեղեցիկ արտաքին հատկանիշներով՝ դրանով ընդգծելով նրանց արտաքին ու ներքին բարեմասնությունների ներդաշնությունը:

Հուսիկն իր նախնիների պես վարում է հրեշտակային կյանք, առաջնորդվում Ավետարանի պատգամներով: Ու թեև մանուկ հասակում (ոչ իր կամքով) ամուսնանում է Տիրանի դստեր հետ, այնուամենայնիվ նա թագավորից ստացած պատիվները ոչինչ է համարում, գերադասում է նախատիքներ կրել Քրիստոսի համար: Եվ 12 տարեկանում հեռանում է կնոջից և ապրում առաքինի կյանքով: Քուզանդը Հուսիկի կերպարը իդեալականացրել է:

Խորենացին ավելի սեղան և իրական գծերով է ներկայացնում Հուսիկին ու նրա նահատակությունը: Գովասանքի ու դրվատանքի խոսքերով զարդարելու փոխարեն, Խորենացին Հուսիկի վեց տարվա եպիսկոպոսական գործունեությունը ներկայացնում է մեկ դրվագով: Երբ Տիրանը ուզում է Հունաց թագավորի (Հուլիանոսի) պատկերը դնել Ծոփաց եկեղեցում, Հուսիկը, համաշտակելով այն, օգնում է գետնին և ոտքով մանրացնում: Այս փորձի դրվագով Խորենացին բացահայտում է Հուսիկի հավատացյալի ճշմարիտ սերն առ Աստված:

Բավականին ընդգծված կերպար է Ներսես Մեծը, որը երանելի Հուսիկի անօրեն գավակ Աթանազիոսի միակ որդին էր: Նա իր գործունեությամբ և կենսակերպով յուրահատուկ տեղ է գրավում հայոց պատմության մեջ:

Ներսեսը, ի տարբերություն մինչ այդ նշվածների, ավելի ամբողջական կերպար է, քանի որ նրանում մարդ-անհատը և հոգևորականը լրացնում են միմյանց: Ներսեսի կերպարը հիմնականում զարգանում է իր իսկ գործողությունների, գործունեության ընթացքում:

Պատմիչների ամփոփական գնահատման սկզբունքը այստեղ ևս գործում է: Նրանք բա-

<sup>6</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 308:

<sup>7</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 24:

<sup>8</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 308:

<sup>9</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 50:

ե՛ր չեն խնայում Ներսեսին կատարելատիպ ներկայացնելու համար: Մասնավորապես Բուզանդը (Խորենացին բոլոր դեպքերում պահպանում է իրեն հատուկ հավասարակշռությունն ու օբյեկտիվությունը) իր սիրելի հերոսին գովում է գեղեցիկ բնութագրումներով, ընդգծում նրա մեջ ոչ միայն ներքին, այլև արտաքին բարեմասնությունները: «Այր էր սա մեծ և բարձր ցանկալի հասակաւ, և վայելէր գեղով. զի ոչ գտանէր ուրեք մնան գեղեցկութեաննի վերայ երեսաց երկրի, տենչալի ցանկալի և զարմանալի և ահագին ամենայն նայեցող տեսողաց, և նախանձելի արութեանն՝ ի զինուորական կրթութեանն...»<sup>10</sup>:

Համեստորեն ստանձնելով հայրապետության գործը (թեև իրեն անարժան էր համարում այդ պատվին)՝ Ներսեսը դառնում է իսկական եկեղեցական գործիչ, իսկական հովվապետ: Նա չի սահմանափակվում միայն աղոթելով, մարդկանց սեր ու հավատ քարոզելով, խոտորվածներին ճիշտ ճանապարհի բերելով: Նա ապրում է ակտիվ, լեցուն, հայրենամպաստ և աստվածահաճո կյանքով: Նախ՝ որպես հովվապետ նա ամրապնդում է հոգևոր դասի նյութական պայմանները, նաև հնարավորություն ընձեռում ընդլայնելու նրանց գաղափարական ազդեցության ոլորտները: Նոր բարեփոխումներ և կարգեր է հաստատում եկեղեցու սպասավորների և ընդհանրապես քրիստոնյա հավատացյալների համար: Կառուցում է բազմաթիվ եկեղեցիներ (ըստ «Վարք սրբոցի», Ներսես Մեծը կառուցել է 2040 վանք), բացում է հայկական նոր կրթարաններ, ինչպես նաև հունական ու ասորական լեզուներով դպրոցներ:

Փառաբանելով Ներսես հայրապետի ծավալած գործունեությունը՝ Բուզանդը շեշտում է նաև Ներսեսի զուտ քրիստոնեական-մարդկային արարքները, անկելանոցների, ծերանոցների, հիվանդանոցների կառուցմանը ձեռնամուխ լինելով՝ Ներսեսը սեփական օրինակով օգնում, քաջալերում է աղքատներին ու սովյալներին, հիվանդներին, լքվածներին ու թերահավատներին:

Հոգևորական լինելուց զատ, Ներսեսը նաև քաղաքական գործիչ է, մեծ հայրենասեր: Նախորդների մնան նա ևս երագուս է իր հայրենիքը տեսնել ազատ, ինքնիշխան ու միաբանված: Ու բնական է, որ ներքին խժժությունները, անհաշտություններն ու Արշակունիների վարած անհեռատես քաղաքականությունն ու ցուփ վարքը անպայմանորեն պիտի ազդեին ու տառապանք պատճառեին ինչպես կաթողիկոս, նույնպես և մարդ - անհատ Ներսեսին: Վերջինս անընդմեջ իր բարոյախրատական քարոզներով փորձում է հետ պահել Արշակ Երկրորդին չմտածված քայլերից, կանխել սխալները:

Ներսեսի կերպարը շարունակում է բացահայտվել հետագա գործունեության ընթացքում: Ի տարբերություն մյուսների, Ներսեսը, թերևս, ամենաշատն է միջամտում երկրի արտաքին քաղաքականության հարցերին: Ցանկացած փակուղային վիճակում և՛ երկրի թագավորները, և՛ իշխանները, և՛ հասարակ ժողովուրդը անմիջապես դիմում են Ներսեսին: Խաղաղության աղավնու մնան նա միշտ հայտնվում է ճիշտ տեղում, ճիշտ պահին և իր սիրտ ու հավատի խոսքով համոզում թշնամուն և անգամ հարգանք է առաջացնում: Պատահական չէ, որ օտարներն ակնածանքով են խոսում Ներսեսի մասին: Այսպես՝ ավագներն ու խորհրդականները զգուշացնում են Վաղեսին հարգանքով վերաբերվել հայոց հովվապետին (երբ կայսրը ցանկանում էր սպանել Ներսեսին՝ նրան մեղադրելով որդու մահվան մեջ), որովհետև «թագաւորն դոցա աշխարհին և դա, որպէս ասեմ, ընդ մի համար են. և ասեմ՝ թէ աշխարհն այն, ուստի դոքա եկեալ են, սիրեն զայդդ. և երևելի է դա անդ»<sup>11</sup>:

Ներսեսի բնութագիրը տրվում է նաև Արշակ Երկրորդի զայրացած խոսքերում՝ ուղղված հունաց Վաղես կայսեր դեսպաններին. «...զիհարձ իշխեսաց արգելուլ զայնպիսի այր զմեծ ու զպատուական, զզուխ և զվարդապետ զառաջնորդ աշխարհի և զթագաւորութեան միող»<sup>12</sup>:

Ուրեմն, որքան էլ Արշակին դուր չգային կաթողիկոսի հանդիմանությունները, այնուամենայնիվ նա չէր կարող ըստ արժանվույն չզնահատել Ներսեսին: Վերջինս նույնպես արթուն մտքով ու սիրտը հոր այքերով էր նայում բոլորին: Թեև Արշակի շատ արարքներ ու ձեռնարկումներ ընդունում էր զայրությով, սակայն դրանով հանդերձ, գերադասում էր ունենալ ճանապարհից շեղված, բայց հարազատ արքա, քան դառնալ օտարների կամակատարն ու ստրուկը:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 140:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 164:

Կյանքի ամենատարբեր իրավիճակներում հայոց հայրապետը միշտ գտնվում էր իրեն հատուկ բարձունքում. անդրդվելիորեն պահպանում էր իր ճշմարիտ սերն ու վստահությունը Աստծո նկատմամբ, սեփական վարքով, մարդկանց հետ ունեցած փոխհարաբերություններով, բարությանը օրինակ է դառնում բոլորի համար, պատերազմի դաշտում էլ չի լքում հարազատ գործքին, իր աղոթքներով գորավիզ լինում նրան, ներողամիտ է և անհիշաչար:

Ներսես Մեծի կերպարակերտման սկզբունք կարելի է համարել նաև հեղինակի գնահատական կրկնությունները: Հատկապես Բուզանդն առիթը բաց չի թողնում իր գաղափարակիր հերոսին գովերգելու համար ու շատ դեպքերում նրա բնութագրումները կրկնում են միմյանց: Այսպես՝ «Եւ զաղքատս և զտառապետս այսպէս սիրէր և ակն ածէր ի վերայ նոցա, զի զիր ինչ զհանդերձս և զկերակուր հասարակէր ընդ նոսա ...»<sup>13</sup>: «Այրեաց և որբոց և չքատրաց հանգիստ և դարման առնէր. և աղքատք զօրհանապազ ընդ նմա ուրախ լինէին. և տաճար իւր և սեղան զօրհանապազ աղքատաց և օտարաց էր և հիրոց...»<sup>14</sup>:

Խորենացու գործի մեջ Ներսես Մեծն ավելի գործնական է և իբրև շոշափելի կերպար՝ ավելի համոզիչ: Նրա բնավորության գծերն ուրվագծվում են հենց գործողությունների, մարդկանց հետ ունեցած հարաբերությունների շրջալսում: Խորենացին ավելի շատ փաստագրում է, քան գնահատականներ տալիս կերպարներին:

Սուրբ Ներսես հայրապետին իր աստվածային էությանը չի զիջում նաև որդին՝ Սահակ Պարթևը, որը Լուսավորչի սերնդի վերջին ներկայացուցիչն է:

Հասակ առնելով հոր հովանու ներքո՝ Սահակը մեծանում է աստվածային գիտությամբ, առաքինությամբ ու բարեպաշտությամբ, դառնում հարուստ ներաշխարհով, բացառիկ գիտելիքներով, հեզահամուրյր ու իմաստասեր անձնավորություն:

Նստելով հայրապետական աթոռին՝ Սահակն իր հոր՝ Ներսես Մեծի նման իրեն դրսևորում է որպես իսկական եկեղեցական-քաղաքական գործիչ, իր ողջ ուժերը ներդնում առողջ ու ամուր պետություն ստեղծելու գործին:

Սահակ Պարթևը սկզբնական շրջանում ապրում է ճգնավորի կյանքով՝ աղոթելով ու սեր քարոզելով: Կաթողիկոս ձեռնադրվելուց հետո, սակայն, ամբողջ երկրով մեկ ծավալում է ակտիվ հայրենամակեր գործունեություն: Հայոց հայրապետը միջամտում է երկրի քաղաքական կյանքին, դեմ առ դեմ հանդիպում ու օրախնդիր հարցեր լուծում օտարազգի դեսպանների ու թագավորների հետ:

Այսպես, Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Ատտիկոսը Սահակին ուղղված նամակում գրում է. «Բազում զոտոբին Աստուծոյ մատուցանենք յաղագս քո բարեհամբաւութեանց ի մէջ այդպիսի բարբարոս ազգի. այլ ազատ ի մեղադրանաց ոչ թողունք, որ ոչ կանխաւ յիշատակեցեր զսիրելութիւն Գրիգորի և Ներսիսի երանելեաց քոց հարց»<sup>15</sup>:

Թեև այս նախադասությանը հետևում են թեթև մեղադրանքներ՝ ուղղված Սահակին, սակայն ակնհայտ է օտարազգի եպիսկոպոսի ակնածանքը ինչպես Սահակի, այնպես էլ նրա նախնիների նկատմամբ:

Գրականագիտության մեջ ընդունված տեսակետ է, որ այս նամակներն իրականում գոյություն չեն ունեցել, այլ լոկ Խորենացու գեղարվեստական հնարանքներից են, այնուամենայնիվ այս ձևը ևս կերպարների բնութագրման ու բացահայտման սկզբունք է:

Սահակ Պարթևը շատ բաներով հիշեցնում է հորը՝ Ներսես Մեծին: Նա ևս հոգեկան մեծ տառապանք է ապրում, երբ հայոց նախարարները համոզում են նրան պարսից Վռամ թագավորի մոտ չարախոսել հայոց Արտաշիր արքային, հեռացնել նրան գահից: Հայրենասեր, մարդասեր Սահակի պատասխանը հնչում է ավելի քան համոզիչ. «Ինձ քաւ լիցի մատնել զայլոց զիմ մոլորեալ ոչխարս, և ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն, այլ զահաւլէժ առնել: Չի եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի՝ փութայի և ոչ յապաղէի, յուսալով զկանգնումն զլորելոյն. այլ հեթանոսաց, յառաւել կործանումն՝ ոչ առնում յանձն, ըստ այնմ՝ թէ մի՛ մատնէր զազանաց զանձն խոստովանող քեզ...»<sup>16</sup>:

Նշված մեջբերումը բավարար է համոզվելու, որ նա քրիստոնեական հավատով լեցուն, իր սկզբունքներին հավատարիմ հոգևորական-անհատ է, նաև՝ պետական մտածող: Նա-

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 110:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 122:

<sup>15</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 416, 418:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 430:

խարարների հետ ունեցած Սահակի երկխոսությանը հանդիպում ենք Փարպեցու գործի մեջ, և հետաքրքիրն այն է, որ Փարպեցու «Հայոց պատմության» մեջ ևս Սահակ Պարթևը տալիս է համարյա նույն պատասխանը. «...քառ լիցի մատնիչ լինել ճշմարիտ հաւատոյն մե-րոյ և անհաւատից զիմ հօտի գնոլորեալ ոչխարն մատնել յայպանունն:...Արդ՝ եթէ էր տանել առ բժիշկ առողջ զվիրաւոր եկեղեցւոյս իմոյ զոչխար՝ փութայի և ոչ յայպաղէի...»<sup>17</sup>:

Այս յուրօրինակ նմանությունը ուսումնասիրման այլ խնդիր է, մեզ հուզողն այն է, որ կոնկրետ այս պարագայում մեր երկու պատմիչների (Խորենացու և Փարպեցու) Սահակները կրկնում են միմյանց և բացահայտվում են նույն սկզբունքով:

Սահակ Պարթևը մեծ ներդրում ունի նաև հայ գրերի ստեղծման ու տարածման գործում: Նրա անմիջական աջակցությամբ է Մաշտոցը ստեղծում հայոց նշանագրերը:

Իհարկե անժխտելի է Սահակի մեծ ու անփոխարինելի ավանդը այս գործում, սակայն Փարպեցին չափից ավելի է գնահատում նրա դերը՝ սովերի մեջ թողնելով Մաշտոցին. «...ո-րոց օգնելովն զօրէր երանելի Մաշտոց, հանդիպեցուցանէր զհայերէն աթոթայսն ըստ կարգման սիլովբայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սա-հակայ զաթոթայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունից: Վասն զի ոչ լինէին բաւա-կան ի վճարել անսխալ ուղղակի, առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Սահա-կայ, որ յոյժ առցեալ անցուցանէր վարժիք զբազում գիտնաւքն Յունաց...»<sup>18</sup>:

Այնուհետև Փարպեցին նշում է, որ գրերի ստեղծումից հետո Աստվածաշունչն արագ թարգմանելու խնդիր է ստեղծվում, իսկ այդ գործը ձեռնարկել կարող էր միայն Սահակը, ո-րովհետև մնացածները (Մեսրոպն ու իր աշակերտները) «...ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգից յունարէն ուսմանն»<sup>19</sup>: Փաստորեն, Փարպեցին այս պահի համար ընտրում է խելացի ու գիտակ մարդկանց ունակությունների ու հնարավորությունների մե-մացման ուղին՝ բարձրացնելով ու իդեալականացնելով Սահակ Պարթևին: Բազմաթիվ կեր-պարների՝ քահանաների, նախարարների, անգամ թագավոր Վառնշապուհի և Մեսրոպի բե-րանով Փարպեցին բնութագրում ու գնահատում է իր սիրելի հերոսին՝ Սահակին: Խնդրելով վերջինիս ձեռնամուխ լինել հունարենից հայերեն Աստվածաշունչի թարգմանությանը՝ նրանք ասում են. «...գոր ոչ ունեք այլում ի Հայաստան աշխարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկա-նել յայդպիսի գործ մեծ: Վասն զի և ոչ կարացաք հմուտ լինել և տեղեկանալ այդչափ ա-րուեստատր ուսմանցդ, որպէս և քեզ տուաւ զօրութիւն ճարտարութեան ի վերին օգնակա-նութենէն յաղագս թո առաքինասէր և պարկեշտ հոգւոյդ»<sup>20</sup>:

Այսպիսով, Փարպեցին հայ գրերի ստեղծման դասինն հանձնում է Սահակ Պարթևին՝ անկյունում թողնելով Մաշտոցին:

Խորենացու կերտած Սահակ Պարթևն ավելի գործնական է. նա հոգ է տանում, որպես-զի Հայաստանի բոլոր անկյուններում դպրոցներ, կրթարաններ բացվեն, Մաշտոցի և նրա աշակերտների հետ ակտիվորեն մասնակցում է Սուրբ Գրքերի թարգմանությանը, անհրա-ժեշտության դեպքում դիմում օտարազգի իշխաններին, հայցում նրանց աջակցությունն ու թույլտվությունը լուսավորության տարածման գործում:

Փաստորեն, այս անգամ թեև Փարպեցին կրկնում է Խորենացուն, այնուամենայնիվ զգացվում է հեղինակային վերաբերմունքը և կերպարակերտման տարբերությունը: Եթե Խորենացին ձգտում է օբյեկտիվորեն ներկայացնել դեպքերն ու դեմքերը, ապա Փարպեցին ջանք չի խնայում իր համակրանքն արտահայտելու և ոգևորությամբ գրելու իր սիրելի կեր-պարի ծավալած գործունեության մասին:

Սահակ Պարթևն, այնուամենայնիվ, այն մտավոր մեծերից է, որը քաջ գիտակցում է կրթության դերը պետության կայացման գործում, զգում է ժամանակի պահանջներն ու պա-հի կարևորությունը: Եթե նրա նախապապը Գր. Լուսավորիչը, մարդկանց հանեց խավա-րից ու առաջնորդեց դեպի լույս, ապա վերջինիս հետևորդը՝ Սահակը, այդ լույսը առաքեց ու սփռեց մարդկանց հոգիներում: Եվ բնական է, որ Սահակ Պարթևի պես անհատ հոգևորա-կանը պետք է դառնար նաև գաղափարակիր:

Գնահատելով հայոց հայրապետի ավանդներն ու դերը հայ ժողովրդի կյանքում՝ ան-

<sup>17</sup> Լազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 50:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 34, 36:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 36:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 38:

պայմանորեն պետք է անդրադառնալ նաև մեծ ուսուցիչ, հայոց գրեթե երկնող Մեսրոպ Մաշտոցին, քանի որ այս երկու կերպարները զարգանում ու բացահայտվում են երկուստեք, միմյանց լրացնելով: Իհարկե, Մաշտոցը չուներ այն հնարավորությունն ու հեղինակությունը՝ Սահակի պես լուծելու երկրում ծառացած ամենատարբեր բնույթի հարցեր, սակայն միայն գրեթե գյուտը բավական է, որպեսզի Մաշտոցը իր հավերժական տեղը գրավի իդեալ-կերպարների շարքում:

Մաշտոցի կյանքին ու գործունեությանը առավել ու մանրակրկիտ անդրադարձել է նրա աշակերտը՝ Կորյունը, իր «Վարք Մաշտոցի» գործում: Սկզբում նա պատմում է Մաշտոցի ծննդյան, աշխարհիկ կյանքի մասին, այնուհետև մանրամասն նկարագրում է նրա կրոնական-ճգնակեցական կյանքը և առաքելական գործունեությունը: Մաշտոցի կերպարը «Վարքում» զարգանում է հիմնականում միագիծ: Մյուս հոգևոր հայրերի նման հանդես է գալիս որպես ժամանակի ուղղագիծ գաղափարակիր, իդեալ: Սա, թերևս, բխում է վարքագրական ժանրի պահանջներից:

Փարպեցին, ինչպես նշեցինք, Մաշտոցին ներկայացնում է որպես ավելի համեստ ունակությունների տեր անձնավորություն, որն առանց ուրիշների օգնության, առավելապես Սահակ Պարթևի, ինչպես նաև աստվածային միջամտության, չէր կարող հասնել այդպիսի հաջողության: Սա որոշ չափով ընդունելի տեսակետ է. այդպիսի ծանրագույն և պատասխանատու գործ հնարավոր էր գլուխ բերել միայն մեծ ջանքերի ու գորեղ սատարի շնորհիվ, սակայն, այդուհանդերձ, չպետք է թերագնահատել Մաշտոցի բացառիկ դերը Սահակ Պարթևի համեմատությամբ: Մաշտոցն առաջինն է զգում հայ գրեթե ստեղծման պատմական անհրաժեշտությունը. «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ... Վասն որոյ եղ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս և արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիք տաժանէր»<sup>21</sup>:

Եվ բազմաթիվ ջանքերի, համառ պրպտումների և աստվածային օրհնության շնորհիվ Մաշտոցը ստեղծում է հայոց գրերը: Խորենացին, առանց ավելորդաբանությունների, ուղղակի ներկայացնում է նրա ձեռնարկումները Հայաստանում ու նրա սահմաններից դուրս: Ընթերցողի համար դա բավական է՝ ճանաչելու և գնահատելու երանելի Մեսրոպ Մաշտոցին:

Հայ առաջին ուսուցչի աստվածաբանական ու հայրենասիրական դասերը ժառանգել էր նաև նրա աշակերտ Ղևոնդ Երեցը:

Թեև նա իր հոգևոր կոչումով բարձր չէր, սակայն իր վարք ու բարքով մեծ հարգանքի ու համբավի էր արժանացել ժողովրդի և անգամ օտարների շրջանում: Նա եղավ հոգևոր գորավարության և նահատակության գլխավորը, այդ իսկ պատճառով իր եղբայրակից քահանաները, ի պատիվ նրա, կոչվեցին Ղևոնդյաններ:

Կաթողիկոս Հովսեփը, Ռշտունյաց եպիսկոպոս Սահակը, Արծրունյաց եպիսկոպոս Մուշեղ, Սամվել, Աբրահամ քահանաները, Խորեն, Դավիթ երեցները և այլք հայ ժողովրդի համար ճակատագրական պահին իրենց դրսևորում են որպես իսկական հավատացյալներ ու հայրենասերներ: Հազկերտին ուղարկված մամակ-պատասխանում արդեն իսկ առկա է նրանց անհուն սերը Աստծո նկատմամբ ու պատրաստակամությունը նահատակվելու հանուն քրիստոնեական կրոնի. «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք»<sup>22</sup>:

Նամակում արտահայտված գաղափարները թույլ են տալիս ընթերցողին ճիշտ գնահատել դեպքերը և հոգևոր գործչի դերը ժամանակի առումով:

Ղևոնդյանները սեփական մարմինները դրեցին հայրենյաց գոհասեղանին. ապահով տեղերում աղոթելու փոխարեն, նրանք հաստատուն հավատով և «սրտի պնդութամբ» մտնում են Ավարայրի դաշտ՝ կողք կողքի մարտնչելու հանուն վեհ գաղափարի:

«...Այսօր եպիսկոպոսք և երիցունք և սարկաւագունք, սաղմոսերգողք և գրակարդացք իւրաքանչիւր կարգեալ կանոնա՝ իբր վառեալք զինու և պատրաստեալք ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զքջնամիսն ճշմարտութեան...»<sup>23</sup>. - ասում է Ղևոնդը՝ մարտից առաջ քաջալերելով հայ զինվորներին:

Ղևոնդյանները, մասնավորապես Սահակ եպիսկոպոսն ու Հովսեփ կաթողիկոսը բնու-

<sup>21</sup> **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 390:

<sup>22</sup> **Եղիշե**, Վասն Վարդանա և հայոց պատերազմի, Երևան, 1989, էջ 80:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 228:



թագրվում են նաև Դենշապուհի խոսքերում. «Յորժամ եկի ես յաշխարհն Հայոց՝ գտարի մի և վեց ամիս եհաս շրջել ինձ անդ. ոչ յիշեմ ես ամենևին՝ եթէ բան մի տրտունջ յունեքէ լուայ վասն քո, սոյնպէս և առաւել վասն Յովսէփայ... և ես ինձէն իսկ աջօք իմովք տեսի, զի որպէս հայր հաստատուն համարեալ էր ամենայն աշխարհին, և անաչառութեամբ սիրէր զմեծա- մեծս և զփոքունս»<sup>24</sup>:

Օտարագիւններն այդպէս էլ չեն կարողանում հասկանալ, թէ ինչ ասել է «քրիստոնյա»։ Բազմաթիվ մարմնական չարչարանքները չեն սասանում դեռնոյանների հավատը, ընդհա- կառակը՝ նրանք, ի զարմանս պարսիկների, մեծ սիրով և ուրախությամբ են ընդունում մահը հանուն Քրիստոսի։

Առնոյաններից յուրաքանչյուրի համար սեփական ժողովրդին, քրիստոնեւթյանը, ե- կեղեցուն ծառայելն, ըստ Եղիշեի, ներքին մղում է, համոզմունք, անհատական հատկանիշ, որը միաժամանակ դառնում է ընդհանուր հոգևոր դասի ներկայացուցիչների համար։

Փարպեցին հիմնականում օգտվում է Եղիշեի կերպարակերտման սկզբունքներից։ Նրա կերտած հերոսները բացահայտվում են իրենց գործողություններով ու արարքներով, երկխոսությունների ու հանդիպումների ընթացքում, օտարների բնութագրումների մեջ։ Միայն Փարպեցու հեղինակային գնահատականը շատ ավելին է, քան Եղիշեի։ Վերջինս գե- րադասում է իր գաղափարները, մտքերն արտահայտել կերպարների միջոցով, նրանց բե- րանով՝ թույլ տալով վերջիններիս դրսևորվել ինքնուրույն։

Փարպեցին սիրում է ուղղակի գնահատականներ ու բնութագրումներ տալ իր կերպար- ներին ու նրանց արարքներին։

Ինչպէս նախորդ դէպքում, այստեղ ևս, մեր համոզմամբ, Փարպեցին օգտվել է Եղի- շեից։ Հոգևորականների կերպարային գծերը կրկնվում են, սակայն կա մի շատ նուրբ տար- բերություն. Եղիշեի հերոսները ավելի բնական են, համոզիչ, զգացմունքային, ինքնուրույն։ Մա թերևս բացատրվում է այն բանով, որ հեղինակը եղել է այս բոլոր իրադարձությունների ականատեսն ու մասնակիցը և թոթին է համձնել այն, ինչ ամմիջապէս տեսել ու զգացել են ինքն ու իր ժամանակակից հոգևորականները։

Ինչպէս, հայրենի կրոնի, հայրենիքի պահպանման համար մղվող անվերջանալի պատե- րազմում իրենց ուրույն և արժանավայել տեղը ունեցան նաև մի շարք հոգևոր այրեր, որոնց պատմիչները հաճախ անվանում են «սրբեր» և նմանեցնում հրեշտակների։

Այսպէս՝

1. Եկեղեցու բոլոր սպասավորները ճշմարիտ, անշահախնդիր, անկաշառ, անհողողող, ինքնամոռաց հավատացյալներ են։

2. Նրանք սուրբ ու առաքինի վարքակիրներ են, հրեշտակային մաքրությամբ, անքիծ ու պարկեշտ։

3. Անխոնջ վարդապետներ են ու քարոզիչներ։ Սիրով, նվիրումով, ինքնամոռացու- քյամբ ամենուրեք քարոզում են սուրբ Ավետարանը։

4. Անողոք «դատավորներ» են, անընդմեջ հանդիմանում են զարտուղիներով ընթացող- ներին, հետ բերում խոտորվածներին։

5. Բոլոր հոգևոր այրերը, վաղ թէ ուշ, հրաժարվում են մարմնավոր կյանքից՝ իրենց նվի- րելով միայն Աստծուն, գերադասում են մենակեցությունն ու ճգնակեցությունը։

6. Հրաշագործներ են, Աստծո զորությամբ նրանց տրված է հրաշքներ գործել։

7. Տեսիլքները, որպէս աստվածային խորհրդանիշ, հաճախ են այցելում սուրբ հոգևո- րականներին։

8. Հրաժարվում են ճոխ ու ապահով կենսակերպից, ապրում բուսակերությամբ, կրում են մազեղեն։

9. Նրանց մեծ մասը ունենում է ոչ բնական վախճան, հիմնականում դառնում են ան- հավատ մարդկանց զոհերը։

10. Բոլոր հավատացյալներն, անխտիր, մահն ընդունում են գրկաբաց և ուրախ, որպէս միակ փրկություն ու աստվածային պարգև։

V դարի մատենագրության մեջ ներկայացված «սրբերի» կողքին հանդես են գալիս նաև այլ հոգևորականներ։ Վերջիններիս կերպավորման խնդիրը, որ հիմնականում ա-

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 340։

ծանցվում է վերը քննված օրինաչափություններից, գուցե ուսումնասիրության առանձին հարց է, սակայն բանն այն է նաև, որ հերոսների ընտրության դեպքում հաշվի ենք առել, այսպես կոչված, հերոսի դրականության չափանիշը (պատմագրության մեջ հոգևոր հայրերը, առանձին բացառությամբ, բոլորն էլ այդպիսին են): Այս դեպքում մենք կարող էինք բաց չթողնել նաև Ղևոնդ Երեցի կերպարը: Բայց այստեղ մի նրբություն կա՝ կերպարը պատմագրության մեջ նյութականացված է գաղափարական առումով. դիմանկարի մեջ բացակայում են վերջինիս արտացոլման այն գծերը, որոնք հիմնականում ձևային են (արտաքինի նկարագրություն, սոցիալական սիմվոլիկա և այլն): Մյուս կողմից նա իր դերով ու գործունեությամբ կոնկրետ իրավիճակի մեջ է՝ հակված դեպի աշխարհիկ գործը: Ցածրաստիճան մնացած հոգևորականների կերպարները համահարթված են, ուստի հնարավորություն չեն տալիս առանձնացնել կերպավորման ինքնահատուկ չափանիշներ: Պատմագրության մեջ կերտված «սուրբ» հոգևորականների կերպարներն, այսպիսով, իրենց անհատական ու ընդհանուր գծերով հետապնդում են մի նպատակ. նրանք ըստ «Վարդ սրբոցի» «Պէտք է բնակին մեր հոգիներու մէջ: Իրենց ապրումները, հաւատքը, սէրը, նուիրումը, գաղափարականը լոյսի ճառագայթներու պէս պէտք է թափանցեն մեր ներաշխարհին մէջ եւ ջերմութիւն տան աշխարհի ցուրտին և բուքին դէմ ամէն օր բացուած մեր անձերուն»<sup>25</sup>:

**Е. Ж. МНАЦАКАНЯН - Принципы изображения духовенства в историографии V века.**- Ссылаясь на богатые материалы, касающиеся исследуемой исторической эпохи, в статье делается попытка моделировать состав выступающих в историографии героев по классовым группам (в данном случае духовенства) и обратить внимание на принципы изображения последних в историографическом жанре. Изучение портретов высокопоставленных отцов церкви выявляет одну подчеркнутую закономерность. Во всех трудах историографов принципы изображения представителей духовенства в основном одинаковы в смысле социальной символики, портретных характеристик героев, духовных и телесных качеств.

Эти общности обусловлены потребностями официальной литературы времени.

Вместе с тем каждый историограф привносит свои оттенки, которые непосредственно связаны с особенностями характера духовных личностей, а также с занимаемой ими духовной позицией.

Именно эти особые черты впоследствии явились основой для изображения последних в художественной литературе.

<sup>25</sup> «Վարդ սրբոց», Պէտքոյ, 1975, էջ է: